ՎԻԴԵՈ ՄՐՑՈՒՅԹ
ԵՎՐՈՊԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Մրցույթի նկարագրություն

Եվրոպայի օրվա կապակցությամբ Հայ Առաջադեմ Երիտասարդություն (ՀԱԵ) ՀԿ-ն առաջարկում է երիտասարդներին պատրաստել կարճ հոլովակ, որը պատմում է, թե ինչ է Եվրոպան հայ երիտասարդների համար: Մենք փնտրում ենք հետաքրքիր և ստեղծագործ վիդեոներ, որոնցում երիտասարդները մեզ կներկայացնեն կոնկրետ օրինակներ, թե ինչ է Եվրոպան հայ երիտասարդների ընկալմամբ:

Ի՞նչ ասոցիացիաներ եք ունենում, երբ մտածում եք Եվրոպայի մասին: Դուք ձեզ եվրոպացի համարու՞մ եք, և ի՞նչ է դա նշանակում Ձեզ համար: Ինչպե՞ս է զուգադրվում հայ լինելը եվրոպացի լինելու հետ: Ինչպիսի՞ն եք տեսնում Հայաստանի եվրոպական ապագան:

Եղեք ստեղծագործ, համարձակ ու յուրօրինակ:

Մրցույթի ընդհանուր դրույթներ և պայմաններ

Քայլ 1: Նկարահանե՛ք կարճ հոլովակ Ձեր հեռախոսով, տեսախցիկով կամ այլ սարքի միջոցով:
Քայլ 2: Վերբեռնե՛ք Ձեր հոլովակը որևէ առցանց վիդեո կայք (օրինակ՝ Youtube, Vimeo և այլն):
Քայլ 3: Գրե՛ք Ձեր հոլովակի համար համառոտ նկարագիր 100 բառի սահմաններում:
Քայլ 4: Ուղարկե՛ք Ձեր հոլովակը մրցույթին՝ լրացնելով մեր համառոտ առցանց հայտադիմումը այստեղ՝ https://goo.gl/JizR7m

Մրցանակ
Վիդեո մրցույթի հաղթողը կստանա դեպի Եվրամիության երկրներից մեկը 1 շաբաթ տևողությամբ կրթական անվճար ուղևորության հնարավորություն: Մենք կհոգանք ուղևորության հետ կապված բոլոր ծախսերը՝ ներառյալ ավիատոմս, կացություն հյուրանոցում, սնունդ և էքսկուրսիա: Ավիաուղիների և չվերթի ընտրությունը կմնա ՀԱԵ ՀԿ-ի հայեցողությանը: Չվերթի ուշացման, կամ մասնակցության չեղարկման պարագայում կազմակերպությունը չի իրականացնի գումարի վերադարձ կամ փոխհատուցում: Ուղևորությունը տեղի կունենա սույն թվականի հուլիս-նոյեմբեր ամիսների ընթացքում:

Դուք կարող եք մրցույթին մասնակցել, եթե՝

- Հայաստանի Հանրապետության քաղաքացի եք:
- Մրցույթի անցկացման ընթացքում 16-ից 30 տարեկան եք:
- Երբևէ չեք վարձատրվել Ձեր կողմից պատրաստած հոլովակների համար:
- Չեք աշխատում ֆիլմարտադրության կամ մեդիայի ոլորտում:

Տեխնիկական պահանջներ

- Հոլովակի տևողությունը պետք է լինի 30 վայրկյանից 2 րոպե:
- Այն պետք է վերբեռնված լինի որևէ առցանց վիդեո կայք (օրինակ՝ Youtube, Vimeo և այլն):
- Հոլովակի նկարագրությունը պետք է լինի հայերեն կամ անգլերեն:
- Հոլովակը չպետք է պարունակի անպատշաճ նյութեր կամ պատկերներ (բռնություն, ռասիստական մեկնաբանություններ, պորնոգրաֆիա, անձնական հարձակում, վիրավորանք որևէ մարդու կամ կազմակերպության հասցեին):
- Եթե հոլովակը հայերեն է՝ այն պետք է ունենա անգլերեն ենթագրեր:
- Հոլովակը պետք է ստեղծված լինի մրցույթի սկզբից առավելագույնը 6 ամիս առաջ (այն է՝ ոչ շուտ քան 09.11.2015-ը):
- Յուրաքանչյուր մասնակից մրցույթին կարող է ներկայացնել միայն 1 հոլովակ:

Ուշադրություն՝ հոլովակի հեղինակը պետք է ունենա հոլովակում հայտնվող բոլոր անձանց համաձայնությունը: Եթե հոլովակում հայտնվում են անչափահաս երեխաներ, ապա հոլովակի հեղինակը պետք է ունենա նրանց ծնողների գրավոր համաձայնությունը:

Հեղինակային իրավունք

- Հոլովակները պետք է լինեն մրցույթի մասնակցի օրիգինալ աշխատանքը: Գրագողության պարագայում մասնակիցը դուրս կմնա մրցույթից:
- Հոլովակները պետք է նկարահանված լինեն մասնակիցների կողմից և չպետք է խախտեն որևէ անձի կամ կազմակերպության հեղինակային իրավունքները, ապրանքանիշը, գաղտնիության կամ գույքային իրավունքները:
- Հոլովակը չպետք է պարունակի որևէ թաքնված գովազդ և այդ պատճառով պետք է բացառվի որևէ կազմակերպության անվան արծարծում կամ լոգոյի ցուցադրում:
- Հոլովակում օգտագործված երաժշտությունը չպետք է խախտի որևէ մեկի հեղինակային իրավունքը և պետք է հղում կատարվի երաժշտության հեղինակին:
- Հոլովակը չի կարող գովազդել որևէ բրենդ, ապրանք կամ ծառայություն (օրինակ՝ իրեր, աքսեսուարներ, հագուստ և այլն):
- Մրցույթի մասնակիցները պահպանում են օրիգինալ աշխատանքի հեղինակային իրավունքները, բայց համաձայնում են փոխանցել բոլոր իրավունքները ՀԱԵ ՀԿ-ին և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությանը:
- Մասնակիցները ՀԱԵ ՀԿ-ին և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությանը թույլատրում են ադապտացնել, խմբագրել, ձևափոխել, ֆորմատավորել, վերարտադրել, թարգմանել, արխիվացնել տեսահոլավակը, ինչպես նաև օգտագործել այն հանրային միջոցառումների ժամանակ, հեռարձակել և մասսայականացնել այն:

Ուշադրություն՝ ՀԱԵ ՀԿ-ին իրավունք է վերապահվում մասնակցին որակազրկել հեղինակային իրավունքների խախտման կասկածների դեպքում: Եթե պարզվում է, որ հոլովակը խախտում է որևէ հեղինակային իրավունք, այդ դեպքում պատասխանատվությունը կրում է միայն մասնակիցը:

Գնահատում

Տեսահոլովակները կդիտարկվեն ՀԱԵ ՀԿ-ի մեդիա փորձագետների և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության կողմից՝ ստուգելու դրանց համապատասխանությունը տեխնիկական պահանջներին: Տեխնիկական պահանջներին անհամապատասխանության դեպքում հոլովակը չի անցնի երկրորդ փուլ:

Ընտրություն

ՀԱԵ ՀԿ-ն և Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունը միասին կընտրեն հաղթողին՝ երկրորդ փուլ անցած հոլովակների միջից: Որոշումը կայացվելու է արտահայտված գաղափարի պարզության/հստակության և հոլովակում արտահայտված ստեղծագործ մոտեցման ցուցաբերման հիման վրա: Որոշման բողոքարկումն անհնար է:

Հայտերի հանձնում

Հոլովակները կարող եք ուղարկել սույն թվականի մայիսի 9-ից մայիսի 25-ը ընկած ժամանակահատվածում: Հայտերի ուղարկման վերջնաժամկետն է մայիսի 25-ը, ժամը 17:00-ը:

Հաղթողը

Մրցույթը ունենալու է 1 հաղթող: Հաղթողը կտեղեկացվի իր հաղթանակի մասին էլ.փոստի միջոցով և պետք է արձագանքի իրեն ուղարկված նամակին 7 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե հաղթողը չարձագանքի նշված ժամանակահատվածում, ՀԱԵ ՀԿ-ն իրավունք ունի ընտրել մեկ այլ հաղթողի:

Հաղթողի անունը կհայտարարվի հունիսի 5-ին, Եվրոպայի օրվա տոնակատարության ժամանակ, որը տեղի է ունենալու Հյուսիսային պողոտայում:

<u>Մանրամասների համար կարող եք՝</u>

Հետևել մրցույթի Ֆեյսբուքյան էջին՝ https://www.facebook.com/events/1105657149496726/
Զանգահարել մեզ՝ (+37410) 523870 համարին
Մեզ նամակ ուղարկել՝ apy@apy.am էլ. փոստի հասցեին